# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/6-2

ք.Երևան

«25» հունիսի 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ինտ. Մենտաս գրուփ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ն.Մանուկյանի, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 31.01.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/6-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով մատակարար կազմակերպության 23.06.2020թ. (ՔԿԾ մուտք N4956) գրությունը, կողմերը որոշեցին Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով նախատեսված 1-ին կիսամյակի ընթացքում մատակարարման ենթակա ապրանքատեսակներից՝ 30000 հատ «Ածելիներ» ապրանքատեսակի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանել մինչև 31.07.2020թ.:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/6-2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Ինտ. Մենտաս գրուփ» ՍՊԸ |
| Ք. Երևան, Արշակունյաց-63 | ք. Երևան, Գալշոյան 36/51 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 16047053638600 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02251665 |
| ՔԿ ծառայության՝ Ա. Ղազարյան | «Ինտ. Մենտաս գրուփ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն.Մանուկյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |